ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-դեկտեմբեր)





2023թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 2 տրլն 235.9 մլրդ դրամ, ինչը 42.3 մլրդ դրամով կամ 1.9 %-ով ավել է 2022թ. և 1177.7 մլրդ դրամով կամ 111.3%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-նոյեմբերի ցուցանիշից ավել է 275.4 մլրդ դրամով կամ 14 %-ով: 2023թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 1587,2 մլրդ դրամ, ինչը 483.4 մլրդ դրամով կամ 43.8 %-ով ավել է 2022թ. և 971.8 մլրդ դրամով կամ 157.9 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-նոյեմբերի ցուցանիշից ավել է 597.4 մլրդ դրամով կամ 60.4%-ով: 2023թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 648.8 մլրդ դրամ, ինչը 440,9 մլրդ դրամով կամ 40.5%-ով պակաս է 2022թ. և 205.9 մլրդ դրամով կամ 46.5 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-նոյեմբերի ցուցանիշից պակաս է 321.9 մլրդ դրամով կամ 33.2%-ով:

2023թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 5 մլրդ 695.5 մլն դոլար, ինչը 505.1 մլն դոլարով կամ 9.7 %-ով ավել է 2022թ. և 3 մլրդ 586.6 մլն դոլարով կամ 170,1 % -ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-նոյեմբերի ցուցանիշից ավել է 1 մլրդ 96 մլն դոլարով կամ 23.8%-ով: 2023թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 4 մլրդ 40.8 մլն դոլար, ինչը 1 մլրդ 434 մլն դոլարով կամ 55 %-ով ավել է 2022 թ. և 2 մլրդ 815.2 մլն դոլարով կամ 229.7%-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-նոյեմբերի ցուցանիշից ավել է 1 մլրդ 723.1 մլն դոլարով կամ 74.3%-ով: 2023թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 1 մլրդ 654,7 մլն դոլար, ինչը 928.9 մլն դոլարով կամ 36 %-ով պակաս է 2022թ. և 771.4 մլն դոլարով կամ 87.3 %-ով ավել է 2021թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-նոյեմբերի ցուցանիշից պակաս է 627.1 մլն դոլարով կամ 27.5%-ով:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**